ՆՈՐ ԳՐՔԵՐ

(Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն)

Ռ. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ— «Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր», 1970 թ., տպաքանակը 5000, 466 էջ

Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակած սույն ժողովածուն ամփոփում է տարբեր բնույթի տպագիր ու անտիպ աղբյուրներում ցրված շուրջ հազարի հասնող օրորոցային, մանկական և խաղերգերի ողջ ժառանգությունը՝ համալրված վերջին տարիներում հեղինակի գրառած երգերով: Ռ. Գրիգորյանը ի մի է հավաքել, դասակարգել ու ծանոթագրել է հայ քնարական բանահյուսության այդ ժանրի ստեղծագործություններն իրենց բազմաթիվ տարբերակներով: Բնագիրը բաղկացած է օրորոցային երգեր, Մանկական խաղերգեր և Ծիսական ու խառն երգեր բաժիններից:

Ժողովածուն ունի ռուսերեն և անգլերեն լեզուներով ամփոփում, աղբյուրների ցուցակ, բարբառային և մանկական խոսվածքի բառարաններ, առարկայական և երգերի այբբենական ցանկեր:

Վ. Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ— «Ղրիմի հայկական գաղութի պատմություն (1801—1917)», 1970 թ., տպաքանակը 5000, 250 էջ:

Ղրիմի հայկական գաղութի պատմությանը նվիրված այս երկրորդ գրքով ամբողջանում է ղրիմահայոց բազմադարյան պատմությունը: Հեղինակի 1964 թ. լույս տեսած համանուն վերնագրով աշխատությունը ներառնում էր այդ պատմության միջնադարյան շրջանը, մինչև 1778 թ.:

Ներկա աշխատությամբ նպատակ ունենալով ավարտել ղրիմահայոց նախասովետական շրջանի պատմությունը, Վ. Միքայելյանը լուսաբանել է գաղութի պատմության հիմնական հարցերը՝ գաղութի վերականգնումը, ղրիմահայոց վարչա-կառավարման օրգանները, սոցիալ-տնտեսական դրությունն ու հասարակական կյանքը, մշակույթը:

Մենագրությունը շարադրված է հարուստ արխիվային նյութերի հիման վրա: Ունի աղբյուրների և գրականության, անձնանունների, տեղանունների ցանկեր:

Ն. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ—«Բիայնիլի (Ուրարտու)», 1970 թ., տպաքանակը 2000, 474 էջ:

XIX դարի վերջերից Ուրարտուի պատմությունն ու մշակույթը դառնում է ռուս և արտասահմանյան գիտնականների ուսումնասիրության առարկա: Աստիճանաբար երևան են գալիս նրա պատմությանը և բանասիրությանը նվիրված մի շարք աշխատություններ: Բայց Վանի թագավորության ռազմա-քաղաքական հարցերը, մինչ այսօր հատուկ քննության չեն արժանացել:

Ահա Ն. Հարությունյանը, հենվելով սովետական և մասամբ էլ արտասահմանյան արևելագիտության ձեռք բերած հաջողությունների վրա, իր այս ստվարածավալ գրքով, լրացնում է գոյություն ունեցող այդ բացը: Նա ուրարտական և ասորաբաբելոնական սեպագիր աղբյուրների հիման վրա, լուսաբանում է Նաիրի-ուրարտական ցեղերի միավորման, Բիայնիլի-Ուրարտու պետության կազմավորման, ծաղկման ու կործանման (XII—VI դդ. մ. թ. ա.) պատմությունը:

Գրքում հատուկ բաժին է նվիրված Բիայնիլի-Ուրարտուի տեղագրությանը:

Աշխատությունը լույս է տեսել ռուսերեն, խմբագիրն է ակադեմիկոս Բ. Բ. Պիոտրովսկին:

ՄԱԹԵՎՈՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ— «Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում», 1970 թ., տպաքանակը 2500, 605 էջ:

Մ. Մուրադյանի այս աշխատությունը ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի հրատարակած «Հայկական երաժշտական մշակույթի պատմություն» մատենաշարի երկրորդ գիրքն է: Ընդգրկում է XIX դա-

որ և XX դարի սկիզբը՝ մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում:

Մենագրության մեջ լուսաբանված է թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ հատվածներում ծավալված աշխատանքը հայ նոր պրոֆեսիոնալ կոմպոզիտորական ընտեղծագործության զարգացման ուղղությամբ, երաժշտական առաջին պարբերաթերթերի և ընկերությունների գործունեությունը, բազմաձայնության ընդունումն ու տարածումը, հայ ժողովրդական, գուսանա-աշուղական և հոգևոր երաժշտության նմուշների ձայնագրումն ու օգտագործումը, հիշանավոր կոմպոզիտորների, երաժիշտ-կատարողների և երաժշտագետների ստեղծագործությունը, նոր ժանրերի յուրացումն ու զարգացումը և հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի ձևավորումը:

Ա. Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ — «Որակյալ աշխատուժի ընդլայնված վերարտադրությունը», 1971 թ., տպաքանակ 1000, 190 էջ:

Ուսումնասիրությունը նվիրված է աշխատանքի բնույթի վրա տեխնիկական առաջադիմության ունեցած ազդեցության, ինչպես նաև աշխատուժի պրոֆեսիոնալ-որակական կազմի փոփոխության հարցերին:

Աշխատությունում բացահայտվում են տեխնիկական առաջադիմության հետևանքով առաջացող այն փոփոխությունները, որոնք անմիջապես կապված են որակյալ աշխատուժի ընդլայնված վերարտադրության հետ: Վեր են հանվում որակյալ բանվորական կադրերի պատրաստման գործում տեղ գտած թերությունները, ուսուցման տարբեր ձևերի առանձահատկությունները, տնտեսական նպատակահարմարությունը, հաշվարկվում դրանց համեմատական արդյունավետությունը, որակյալ բանվորական կադրերի պատրաստման և հատկապես նրանց որակավորման բարձրացման ժողովրդա-տնտեսական նշանակությունը: Հատուկ ուշադրություն է դարձվում որակյալ մասնագետների կազմում իրականացվող փոփոխություններին, ինժեներա-տեխնիկական աշխատողների ռացիոնալ օգտագործման հարցերին:

Գրքում առանձին գլուխ է հատկացված երիտասարդ աշխատուժի ռացիոնալ օգտագործման խնդիրներին:

«Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակությունների մատենագիտություն, 1965—1966 թթ.», 1970 թ., տպաքանակ 500, 584 էջ:

Մատենագիտական այս ցանկը ընդգրկում է 1965 թ. ընթացքում ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակած ամբողջ գրականությունը՝ մենագրություններ, հոդվածներ և դիսերտացիաների ավտոռեֆերատներ:

Մատենագիտությունը կրում է տեղեկատու-ինֆորմացիոն բնույթ և նպատակ ունի գիտական աշխատողներին ու մասնագետներին ծանոթացնելու ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի տպագիր արտադրանքի հետ:

Մատենագիտությունը կազմել է Ա. Ա. Գրիգորյանը, պատասխանատու խմբագիրն է Հ. Ս. Մանասերյանը: